


ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇՈՒՄ

Էլեկտրամագնիսական ալիքների՝ զանազան առարկաներից անդրադառնալու հատկությունը լայնորեն կիրառվում է այդ առարկաների դիրքը որոշելու համար: Առարկաների դիրքի որոշումն էլեկտրամագնիսական ալիքների միջոցով անվանում են **ռադիոտեղորոշում**:

Ռադիոտեղորոշիչ սարքը կազմված է հաղորդող և ընդունող մասերից՝ ներառյալ ալեցիրը (ալեհավաքը) (տե՛ս նկարը):

Հաղորդող մասը գերբարձր հաճախության ($0,1 \div 100$ ԳՀչ) հզոր էլեկտրամագնիսական տատանումների գեներատոր է, որը միացված է ալեցիրին: Վերջինս արձակում է ուղղորդված էլեկտրամագնիսական ալիքներ: Հասնելով նպատակակետին՝ ալիքներն անդրադառնում են նրանից և վերադառնում դեպի ռադիոտեղորոշիչ: Ալեհավաքն անդրադարձած ռադիոալիքները «որսում» և ուղարկում է ընդունիչին, որտեղ այդ ալիքների առաջապրած հարկադրական տատանումներն ուժեղացվում և տրվում են տատանագրիչին:



Նպատակակետի հեռավորությունը որոշում են հետևյալ կերպ: Ռադիոտեղորոշիչի հաղորդիչը կարճատև իմպուլսների տեսքով էլեկտրամագնիսական ալիքներ է արձակում: Յուրաքանչյուր իմպուլսի տևողությունը մի քանի միկրովայրկյան է, իսկ իմպուլսների միջև ընկած ժամանակը (ընդհատումների ժամանակը)՝ մի քանի միլիվայրկյան: Հենց ընդհատումների ժամանակ էլ ընդունվում են անդրադարձած ռադիոալիքները:

Չափելով ռադիոալիքի՝ մինչև նպատակակետը հասնելու և վերադառնալու ընդհանուր t ժամանակը, r հեռավորությունը որոշում են $r = ct/2$ առնչությամբ, որտեղ c -ն ռադիոալիքի (լույսի) արագությունն է: